# Շուշի քաղաքի բարեկարգում

Շուշի քաղաքի ընդհանուր բարեկարգմանն ուղղված Հիմնադրամի գործունեությունը հիմնված է Շուշիի քաղաքապետարանի հետ արդյունավետ շարունակական համագործակցության վրա, որի շրջանակներում Հիմնադրամը Շուշիի քաղաքապետարանի բարեկարգման բաժնին է հանձնել մասնագիտական հագուստ քաղաքի մաքրման և բարեկարգման ոլորտի աշխատողների համար:

Ի լրումն, Շուշիում ընդհանուր աղբահանման և ձնահավաքի համար Հիմնադրամը Երևանի քաղաքապետարանի համագործակցությամբ ձեռք է բերել աղբատար ավտոմեքենա:

Ձմռան ամիսներին քաղաքին տրամադրվել է բավարար քանակությամբ աղբ ներքին փողոցները և քաղաքի մուտքերը սառույցից մաքրելու համար:



